ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հոկտեմբեր 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող Մովսես Վարդանյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-145/23» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2023թ. սեպտեմբեր 14-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-145/23» ծածկագրով հրապարակվել է էլեմենտների և մարտկոցների ձեռքբերման գնման ընթացակարգ, որի թիվ 1 (մարտկոց), թիվ 2 (մարտկոց) և թիվ 3 (մարտկոց) չափաբաժիններով մասնակցության հայտ է ներկայացրել «Ավտոմոտիվ7» ՍՊԸ-ն: Թիվ 1, թիվ 2 և թիվ 3 չափաբաժններով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Ավտոմոտիվ7» ՍՊԸ-ն:

Ս/թ հոկտեմբեր 3-ին էլեկտրոնային աճուրդի e_auction.am համակարգի միջոցով «Ավտոմոտիվ7» ՍՊԸ-ին տրվել է շտկման ծանուցում:

«Ավտոմոտիվ7» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդի e_auction.am համակարգում չի կատարել շտկում:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526–Ն որոշման 42-րդ կետով, մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Ավտոմոտիվ7» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրվանից:
3. Սույն որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Ավտոմոտիվ7» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրենի
պարտականությունները կատարող **Մ. Վարդանյան**